ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/59 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

8 օգոստոսի 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու
Վ. Հարությունյան՝ ԱԻ նախարարի խորհրդական.
Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Միլիտոս Դավթյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետ.
Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.
Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ
Ա.Մկոյան՝ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Բացակայում էր
Հ. Ծատուրյան՝ ԱԻՆ աշխատակազմի իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ:
Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Գալուստյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/59» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ՖԼԵԾ» և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.3 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մասնակիցների կողմից ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

N	Մասնակցի գնահատվող չափանիշը	Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները*	
		Մասնակցի անվանումը	
		«ՖԼԵԾ» ՍՊԸ	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
	Չափաբաժիններ	1	2
1.	Մասնակցության իրավունք	Բավարար	Բավարար
2.	«Մասնագիտական փորձառություն»	Բավարար	Բավարար
3	Տեխնիկական միջոցներ	Բավարար	Բավարար
4	Աշխատանքային ռեսուրսներ	Բավարար	Բավարար
5	Ֆինանսական չափորոշիչ	Բավարար	Բավարար
6	Առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխա-նությունը	Բավարար	Բավարար
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	Բավարար	Բավարար

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

3.1 Ընտրված մասնակիցներ ճանաչել՝

ա) 1-ին չափաբաժնով՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ-,

բ) 2-րդ չափաբաժնով՝ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ

3.2 Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/59 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Հարությունյան

անդամներ՝ _____ Մ. Դավթյան

_____ Վ. Դադոյան

_____ Ա.Մկոյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան